

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՌՈՐՅԱ



Բացվել է կենտրոնացված համատեղ ազգային կառույցը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը և Հայաստանում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Մ.Միլսն օրերս Երևանում մասնակցել են կենտրոնացված համատեղ ազգային կառույցի բացման արարողությանը:

Գործակալության այցը մեր հանրապետություն

Վերջերս ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի վտանգների համատեղ նվազեցման ծրագրի (DTRA) տնօրեն, դոկտոր Էլիզաբեթ Ջորջի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են կենսաբանական անվտանգության ոլորտում համագործակցությանն առնչվող ծրագրերը:



Սերգո Կարապետյանն այցելել է Արմավիրի և Արագածոտնի կարկտահարված համայնքներ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Արմավիրի մարզ՝ նախորդ օրը տեղացած կարկտահարության վնասներին տեղում ծանոթանալու նպատակով:



Նախարարին ուղեկցել է Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը:

Նախարարը մասնավորապես եղել է Էջմիածնի տարածաշրջանի համայնքներում, զրուցել է գյուղացիների հետ և նշել, որ վնասների չափերը ճշգրտվելուց հետո հարցը կներկայացվի կառավարության քննարկմանը:

Այնուհետև նախարարն ուղևորվել է Արագածոտնի մարզ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Գործադիրը սահմանել է հայկական կոնյակի ու բրենդիի գինեկուրթի, սպիրտահումքի, սպիրտաջրի, բուրավետ ջրի և խաղողի օղու գինեկուրթի ու թորվածքահումքի թորման համար նախատեսված սարքերին ներկայացվող տեխնիկական պահանջները: Հիմնավորման համաձայն՝ գինեգործական արտադրանքը, մասնավորապես, կոնյակն ու կոնյակի սպիրտը, Հայաստանից արտահանվող հիմնական արտադրատեսակներից են և ունեն ծավալային աճի մեծ ներուժ: Բացի այդ, Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ կոնյակագործությունն ընդգրկվել է առաջնային ոլորտների շարքում: Այդ պատճառով անհրաժեշտ է ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրությունն ու թողարկվող արտադրանքի ցուցանիշները համապատասխանեցնել միջազգային ընդունված պահանջներին: Որոշման ընդունմամբ ակնկալվում է բարձրացնել թողարկվող հայկական կոնյակի, բրենդիի և խաղողի օղու արտադրանքի որակական ցուցանիշները, որը հնարավորություն կտա ավելացնելու դրանց արտահանման ծավալները:

Վարչապետ Հովիկ Աբրահամյանը ներկա է գտնվել «Եվրոպական բիզնես հեռանկարները, խոչընդոտները և հնարավորությունները Հայաստանում» խորագրով համաժողովին, որը կազմակերպել է Եվրոպական բիզնես ասոցիացիան:

Ողջունելով ներկաներին՝ վարչապետը կարևորել է նման միջոցառումների անցկացումը և նշել. «Գործարար համայնքի, ինչպես նաև տնտեսական քաղաքականություն մշակող պատասխանատուների լայն ներկայացվածությունն այս միջոցառմանը, թույլ է տալիս կանխատեսել ակտիվ ու կառուցողական քննարկում բոլորիս հուզող հարցերի շուրջ: ՀՀ կառավարությունը շարունակական քաղաքականություն է իրականացնում գործարար միջավայրի տեսանկյունից Հայաստանն առավել գրավիչ երկիր դարձնելու ուղղությամբ: Մենք հռչակել և հետևողականորեն իրականացնում ենք «բաց դռների» քաղաքականություն՝ չկիրառելով գրեթե ոչ մի սահմանափակում ներդրումային գործունեության նկատմամբ: Գործարար միջավայրի բարելավմանն ուղղված մեր քայլերը բարձր են գնահատվում միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից: Մենք իրականացնում ենք քաղաքականություն, որի նպատակն է՝ ապահովել հավասար պայմաններ բոլորի համար: Օտարերկրյա ընկերությունները պետք է իրենց հարմարավետ և ապահով զգան Հայաստանում:

Արտոնյալ GSP առևտրային ռեժիմ ունենք նաև Կանադայի, Շվեյցարիայի, Ճապոնիայի և Նորվեգիայի հետ: Մեկ այլ հնարավորություն է Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունների միջև վերջերս ստորագրված առևտրի և ներդրումների մասին շրջանակային համաձայնագիրը, որով ստեղծվում են բարենպաստ պայմաններ ներդրումների և երկու երկրների միջև ապրանքաշրջանառության, առևտրի խրախուսման համար: Մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձնում ներդրումային ծրագրերին՝ նպատակ ունենալով աջակցել նոր աշխատատեղերի ստեղծմանը, ներդրումների ներգրավմանը՝ առաջարկելով գործարարներին արտոնությունների լայն շրջանակ: Այս համատեքստում, վստահ եմ, որ Եվրոպական բիզնես ասոցիացիայի գործունեությունը Հայաստանում ևս իր նպաստը կբերի ներդրումների ներգրավման, գործարար համայնքի շահերի ներկայացման և պետություն-մասնավոր երկխոսության զարգացման տեսանկյունից»:

Աշխատաժողով	Էջ 4
Կոոպերացիա	Էջ 5
Մասնագետի խորհուրդը	Էջ 7

ԱՆԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Հեղեղի պատճառած վնասների վերականգնման գործընթացը շարունակվում է

Վարչապետ Զոհիկ Աբրահամյանն աշխատանքային այց է կատարել Շիրակի և Արագածոտնի մարզեր: Կառավարության ղեկավարը եղել է Արթիկում, որտեղ վարչապետին են ներկայացրել նրա նախորդ այցից հետո հեղեղի պատճառած վնասների հետևանքների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքները:



Հայտնի է, որ հեղեղի վնասների վերականգնման գործընթացն ընթանում է հաջողությամբ, և զգալի աշխատանքներ են իրականացվել:

Զոհիկ Աբրահամյանի խոսքով՝ հանձնաժողովի ներկայացրած գնահատականների հիման վրա տուժած արթիկցիներին ցուցաբերված օգնությունն, ըստ հիմնավորումների, կառավարությունը և մեկ անգամ կվերանայի: Նա նշել է, որ կառավարությունն արդեն իսկ հատկացրել է 41 մլն դրամ, միջոցներ են տրամադրվել նաև քաղաքապետարանի և որոշ գերատեսչությունների կողմից՝ տեխնիկայի ներգրավման և վերականգնողական աշխատանքների իրականացման նպատակով: Անդրադառնալով հեղեղատարի վրա կառուցված ապօրինի շինության մասին հարցին՝

Զոհիկ Աբրահամյանն այցելել է հեղեղից տուժած բնակիչների բնակարաններ, զրուցել արթիկցիների հետ, լսել նրանց մտահոգություններն ու պատասխանել քաղաքացիների հարցերին: Արթիկցիները շնորհակալություն են հայտնել վարչապետ Աբրահամյանին՝ իրենց քաղաքում հեղեղի հետևանքների վերացմանը հետամուտ լինելու, ցուցաբերված օժանդակության համար և նշել, որ հեղեղի պատճառած վնասների վերացման աշխատանքներն իրականացվել են հնարավորինս կարճ ժամկետում:

կառավարության ղեկավարը նշել է, որ այն խոչընդոտել է ջրի հոսքին. շինության հարցը կքննարկվի և կկայացավի համապատասխան որոշում:

Այնուհետև վարչապետն այցելել է կարկտահարությունից տուժած Արագածոտնի մարզի Օհանավան և Կարբի համայնքների այգիներ, ծանոթացել տեղացած կարկուտի պատճառած վնասներին, զրուցել գյուղացիների հետ, լսել նրանց մտահոգություններն ու խնդիրները:

Վարչապետը հանձնարարել է համապատասխան գերատեսչությունների ղեկավարներին՝ սեղմ ժամկետներում ավարտել կարկտահարության վնասների ուսումնասիրությունը, որից հետո կառավարությունը կքննարկի տուժած գյուղացիական տնտեսություններին օժանդակություն ցուցաբերելու հնարավորություններն ու տարբերակները:

www.gov.am

ԱՐՏԱՅԱՆՈՒՄ

Գործընթացը չի դադարեցվել

Գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռոբերտ Մակարյանը Tert.am-ի հետ զրույցում հայտնել է, որ այս տարի արտահանվել է 11 500 տոննա ծիրան, իսկ նախորդ տարի նույն ժամանակահատվածում փոքր-ինչ ավելի է արտահանվել, սակայն կոչ է արել դա չկապել Վերին Լարսի ավտոճանապարհի փակ լինելու հետ, այլ պայմանավորված է նրանով, որ բերքն անցած տարի ավելի շատ է եղել:

«Այս տարի մենք կանխատեսում ենք 60 հազար տոննայից ավելի միրգ, բայց անցած տարի այդ թիվն ավելին էր», - նշել է փոխնախարարը:

Ըստ Ռ. Մակարյանի՝ անգամ ճանապարհի փակ եղած ժամանակահատվածում օրական 200- 350 տոննա ծիրան էր արտահանվում: Ինչ վերաբերում է հարցին, թե Լարսի ճանապարհի փակ լինելու պատճառով արտահանող ընկերությունները որքանով են տուժել, նա ասաց, որ ժամանակային, պայմանագրերի կատարման առումով, բոլորի մոտ էլ խախտումներ եղել են, սակայն, ընդհանուր առմամբ, արտահանումը չի դադարեցվել:

Չնայած դրան՝ փոխնախարարը նշել է, որ ահագանգեր չունեն մթերքի փչացման հետ կապված, քանի որ ճանապարհի փակվելուց հետո լաստանավեր են վարձակալվել «Սպայկա» ընկերության կողմից, որոնք իրականացրել են ծովային փոխադրումները:

Ըստ Ռ. Մակարյանի՝ իրենք մասնավոր ընկերության հետ բանակցել են, և այդ մասնավոր ընկերությունը պատասխանատվություն է վերցրել: «Խնդիր կա դրված, որպեսզի նվազագույն լինի լաստանավի գինը, որպեսզի ծիրանի գնի վրա էական ազդեցություն չունենա: Մինչև 1000 դոլարի սահմաններում է կազմվում այդ փոխադրման գինը՝ 20 հազար կիլոգրամի համար, այսինքն, գնի վրա էական ազդեցություն չի ունենում»:

Անդրադառնալով գյուղմթերքի գների՝ Ռոբերտ Մակարյանը նշեց, որ գնագոյացումը տարբեր գործոններից է կախված, բայց գնի նվազման հիմնական գործոնը բերքի ծավալների աճն է:

www.tert.am

ՏԵՍԱԿԵՏ

Ոլորտում ապահովագրությունն անհրաժեշտություն է

Կարկտահարության, քամու և ուժեղ անձրևի հետևանքով Արմավիրի ու Արագածոտնի գյուղատնտեսության վնասները կրկին վեր հանեցին գյուղատնտեսության ոլորտում օր առաջ ապահովագրություն իրականացնելու հրամայականը: Ցրտահարությունների, կարկտահարությունների, սելավների հետևանքով Հայաստանի գյուղատնտեսությունը տարեկան մի քանի տասնյակ միլիարդ դրամի վնաս է կրում:

Ամեն գյուղատնտեսական տարվա մեկնարկին վարկ վերցնող գյուղացին հույսը եղանակի հետ է կապում: Տարվա կեսին նրանցից շատերը փաստի առաջ են կանգնում: Պետական բյուջեից բուլորին կրած վնասի չափով աջակցություն տրամադրել հնարավոր չէ: «2013 թվականին միայն կարկտահարության վնասը հաշվվում էր 25.3 մլրդ դրամ, 2014-ի ցրտահարության հետևանքով վնասը կազմում էր ավելի քան 11 մլրդ դրամ», - Panorama.am-ի հետ զրույցում թվային տվյալներ է ներկայացրել Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության պետ Հրաչյա Ծպենցյանը: Ա գ ռ ա ր ա գ յ ու ղ ա ց ի ա կ ա ն միավորման նախագահ Հրաչ Բերբերյանը Panorama.am-ի հետ զրույցում նշեց, որ ոլորտում այս իրավիճակում որևէ մեկը չի համարձակվի ապահովագրություն իրականացնել:

«Ապահովագրությունը կիրականացվի այն ժամանակ, երբ մենք կունենանք գյուղմթերքի երաշխավորված անվտանգ մշակություն: Իսկ դա կապված է հակակարկտային ծառայության աշխատանքի արդյունավետության հետ», - ասել է միավորման նախագահը: Ըստ Հ. Բերբերյանի՝ հակակարկտային կայաններն այդքան էլ արդյունավետ չեն, աշխարհի զարգացած պետությունները վաղուց անցել են մշակաբույսերի ու այգիների ցանցապատման մեթոդին, ինչն ապահովում է մոտ 100 տոկոս պաշտպանություն: «Աշխարհում երևի միայն Արգենտինայում էին հակակարկտային կայաններն օգտագործում: Մենք գործ ունենք ցածր արդյունավետություն ապահովող սարքերի հետ: Պետք է աստիճանաբար անցնենք ցանցապատման մեթոդին»: Նրա խոսքով, ցանցապատման ծախսերի մասին ներկայացված աստղաբաշխական թվերն իրականությանը չեն համապատասխանում:

Հ. Բերբերյանը հաշվարկել է՝ 1 հա տարածքը ցանցապատելու համար անհրաժեշտ է 2 հազար դոլարին համարժեք դրամ, ցանցը կարելի է օգտագործել 15 տարի:

Տնտեսագետ Մեսրոպ Առաքելյանը Panorama.am-ի հետ զրույցում ընդգծեց, որ տնտեսության ամենաբնական ոլորտի ապահովագրության իրականացումը շատ կարևոր է, համակարգի ներդրման գործում պետք է պետությունը սուբսիդավորում իրականացնի: «Պարտադիր ավտոապահովագրության ներդրման ժամանակ ընդհիմացողները շատ էին, բայց կարծում եմ, այս տարիների ընթացքում համակարգն իրեն արդարացրեց: Նման համակարգ պետք է ներդրվի գյուղատնտեսության ոլորտում և պայմանավորված լինի մարդկանց պարտավորվածությունների կատարման հետ: Օրինակ, եթե լինի գյուղացիական տնտեսություններին տրվող վարկերի ապահովագրություն, ապա համոզված եմ, որ գյուղացիները պատրաստ կլինեն ավելի բարձր տոկոսադրույքով վարկեր վերցնել, որպեսզի դրա մի մասն ուղղվի որպես ապահովագրա-

կան վճար», - նշել է տնտեսագետը:

Մ. Առաքելյանը նկատեց նաև, որ այս մոդելը հայաստանյան ֆինանսական համակարգում կա, երբ հիպոթեքային վարկի տրամադրման պարագայում ապահովագրում են տունը: Եթե մոդելը ներդրվի նաև գյուղաօրոտում, բանկերը, հաշվի առնելով ցածր ռիսկայնությունը, կիջեցնեն տոկոսադրույքները:

Ինչ վերաբերում է պետության մասնակցությանը, Մ. Առաքելյանն առաջարկում է վարկերը սուբսիդավորելու փոխարեն միջոցներն ուղղել ապահովագրության համակարգի կայացմանը: «Վարկերի սուբսիդավորման ազդեցությունը փոքր է, ամսական մի քանի հազար դրամ էլ չի կազմում: Կարծում եմ, որ գյուղացիներն էլ, ֆինանսական համակարգն էլ ավելի կողմ կլինեն, որ 4 տոկոս սուբսիդավորման հաշվին պետությունն ապահովագրական վճարներ կատարի կամ էլ պետական ապահովագրական ընկերություն ստեղծվի»:

Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչություն պետ Հրաչյա Ծպենցյանը նշել է, որ ոլորտում ապահովագրության ներդրման նպատակով արդեն մի քանի տարի քննարկումներ, հետազոտություններ են իրականացվում, միջազգային փորձն են ուսումնասիրում: Նախ որոշել են ապահովագրություն իրականացնել անասնապահության ոլորտում՝ ապահովագրելով խոշոր եղջերավոր անասուններին: Սակայն նախարարության ու ԿԲ համատեղ նոր ու ավելի խոր ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ապահովագրության ներդրման անհրաժեշտությունն առաջին հերթին կա բուսաբուծության ոլորտում: «Ոլորտը մասնավոր ընկերությունների համար գրավիչ չի եղել, ոչ մեկ չի ցանկացել մտնել ապահովագրական դաշտ: Առաջիկա ամիսներին նախատեսվում է մեկնարկել ապահովագրության պիլոտային ծրագիր՝ 10 մշակաբույսերի ու 5 ռիսկերի պարագայում: Մշակաբույսերն են՝ ցորեն, գարի, կարտոֆիլ, լոլիկ, ծիրան, խնձոր, խաղող, դեղձ կաղամբ, պղպեղ: Ռիսկերն են՝ կարկտահարություն, ցրտահարություն, ջրածածկում, երաշտ, հողմ», - ասել է Հրաչյա Ծպենցյանը:

Դեռևս քննարկումներն ընթանում են, ըստ նախնական տվյալների, պիլոտային ծրագիրը կիրականացվի Արարատյան դաշտավայրում: Նախատեսվում է, որ այն որոշակի չափով կսուբսիդավորվի պետության կողմից: «Կենտրոնական բանկն առաջարկել է, որ ապահովագրությունն իրականացվի Ավտոապահովագրության բյուրոյի միջոցով, դրա կազմում ստեղծվի մի կառույց, որը զբաղվի գյուղատնտեսության ապահովագրությամբ: Փորձնական ծրագրի ավարտից հետո, կախված արդյունքներից, նոր այդ կառույցը կառանձնանա», - ասաց վարչության պետը: Նրա խոսքով, պիլոտային ծրագրի շրջանակում պարտադիր ապահովագրություն է ենթադրվում գյուղացիական վարկեր վերցրած գյուղացիների համար, մյուս դեպքում այն կլինի կամավոր սկզբունքով:

Մինչ այդ անհրաժեշտ է ստեղծել տվյալների բազա, կայացնել վնասները գնահատող մասնագետների ինստիտուտը, կազմել մրցույթի տեխնիկական առաջադրանքներ, իրականացնել ռիսկերի մեղմելուն ուղղված ծրագրեր, այդ թվում՝ ցանցապատման աշխատանքներ:

www.panorama.am

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՄԱՐԶԻ 41 ՀԱՄԱՅՆՔ ԼՈՒՐՁ ՎՆԱՍ Է ԿՐԵԼ ԿԱՐԿՈՒՏԻՑ

Հուլիսի 10-ին տեղացած հորդաուար անձրևն ու դրան հաջորդած ուժգին կարկուտը մեծ չափերի վնաս են հասցրել Արմավիրի մարզի երեք տարածաշրջանների 41 համայնքների: Կան համայնքներ, որոնց կրած վնասի չափերը նախնական փվյախներով հասնում են 100 %-ի: Հիմնականում վնասվել են խաղողի այգիները, բանջար-բոստանային մշակաբույսերն ու ջերմոցային տնտեսությունները:



Ակնալիճ համայնքում տեղատարափ անձրևի ու կարկուտի հետևանքով Մեծամորի սելավատարի պաշտպանիչ պատնեշի 50 մետրի հասնող հատվածը, չդիմանալով ջրի ուժեղ հոսքին, փլուզվել է, և ջուրը լցվել է համայնքի մշակովի հողատարածքները՝ կրկնապատկելով գյուղացու վնասը: Ըստ համայնքապետ Գևորգ Միսակյանի՝ Ակնալիճում մշակովի հողատարածքների հիմնական մասը զբաղեցնում են ծիրանի և խաղողի այգիները, լուլիկի հողատարածքները: Գարնանային ցրտահարության հետևանքով ակնալիճցիները կորցրել են ծիրանի բերքը, իսկ այժմ արդեն՝ լուլիկի և խաղողի բերքը՝ զրկվելով իրենց ապրուսի միջոցից: Գևորգ Միսակյանի խոսքով՝ համայնքում առկա է թվով 8 հակակարկտային կայան, և 8-ն էլ գործել են, սակայն կարկուտի ուժգնությամբ պայմանավորված՝ արդյունք չեն տվել:

Ինչպես տեղեկացրեց Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը՝ մարզում առկա է 178 հակակարկտային կայան, որոնք երեկ գործել են ողջ ուժգնությամբ, աղետալի ամպերով պայմանավորված՝ դրանց արդյունավետությունը 0 % է եղել: Ըստ նրա՝ թույլ արտահայտված ամպերի դեպքում միայն արդյունավետությունը կհասնի 80 %-ի, իսկ միջինի դեպքում՝ 50-60 %-ի:

ՀՀ Արմավիրի մարզպետ

Աշոտ Ղահրամանյանի փոխանցմամբ՝ կարկտահարության հետևանքով ստեղծված իրավիճակի մասին զեկուցվել է նաև Հանրապետության Նախագահին, ում անմիջական հանձնարարությամբ համայնքային հանձնաժողովները շատ կարճ ժամանակահատվածում կգույքագրեն վնասի ամբողջական չափերը, համայնքում առկա հիմնական խնդիրները, կներկայացնեն մարզային հանձնաժողովին, որն էլ ամփոփելով այդ տվյալները՝ համապատասխան տեղեկանք կներկայացնի ՀՀ կառավարությանը՝ ստեղծված իրավիճակի համար լուծում գտնելու նպատակով:

Հավելենք, որ կարկուտի հաջորդ օրը մարզում են եղել և մարզպետ Աշոտ Ղահրամանյանի ուղեկցությամբ կարկտահարությունից տուժած համայնքներ են այցելել ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանը: Մարզպետի ուղեկցությամբ համապատասխան համայնքներ է այցելել գյուղատնտեսության նախարարը, համայնքներում են եղել նաև նախարարության և մարզպետարանի ոլորտը ներկայացնող պատասխանատուներ, տեղերում ծանոթացել ստեղծված իրավիճակին, զրուցել գյուղացիների հետ՝ վստահեցնելով, որ վնասները ճշտելուց հետո կներկայացվի կառավարության քննարկմանը:

www.armavir.mtaes.am

ԿԱՐԿՈՒՏԻ ՀԱՍՑՐԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ

Հուլիսի 2-ին Շիրակի մարզում տեղի ունեցած կարկտահարությունը բավականին լուրջ վնասներ էր պատճառել մարզի Մարմաշեն, Վահրամաբերդ, Կապու, Հովուհի, Մայիսյան համայնքների ցանքատարածություններին:

Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության աշխատանքային խումբը չէր հասցրել ճշգրտել կարկտահարության պատճառած վնասների չափը, երբ հուլիսի 4-ին կրկին նույն համայնքների ցանքատարածությունները կարկտահարվեցին: Հուլիսի 5-ին հուսահատված բնակիչները դիմեցին ծայրահեղ միջոցի՝ փակելով Գյումրի-Ամասիա հանրապետական նշանակության ճանապարհը՝ պահանջելով մարզային իշխանության ներկայացուցիչների հետ հանդիպում: Բնակիչների հետ հանդիպեցին մարզպետի տեղակալ Հարություն Արշակյանը և մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մովսես Մանուկյանը: Այնուհետև մի քանի քաղաքացիներ՝ Մարմաշեն և Վահրամաբերդ համայնքների ղեկավարների ուղեկցությամբ, հանդիպում ունեցան Շիրակի մարզպետ Հովսեփ Սիմոնյանի հետ, ով լսեց բնակիչներին, նրանք բարձրացրած խնդիրներն ու առաջարկները, որոնք վերաբերում էին ոչ թե վնասների փոխհատուցման հարցերին, այլ հստակ առաջարկներ էին՝ հակակարկտային կայաններ տեղադրելու վերաբերյալ: Շիրակի մարզպետը հանձնարարեց

իրավիքը աշխատանքային խորհրդակցություն՝ կարկտահարությունից տուժած մնացած երեք համայնքների ղեկավարների մասնակցությամբ՝ քաղաքացիների կողմից բարձրացված հարցի լուծման հնարավոր տարբերակների քննարկման համար:

Հուլիսի 6-ին ՀՀ Շիրակի մարզպետարանում տեղի ունեցավ խորհրդակցություն՝ ՀՀ Շիրակի փոխմարզպետների, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի, ինչպես նաև վերը թվարկված համայնքների ղեկավարներ մասնակցությամբ: Քննարկվեցին տարբեր հարցեր ու տարբերակներ՝ բնակչության կրած վնասները մեղմելու ուղղությամբ: Բայց ամենակարևորը՝ հակակարկտային կայանների տեղադրման հարցն էր, քանի որ ամենալավ փոխհատուցումը դեռևս երաշխիք չէ նոր կարկտահարությունից խուսափելու համար: Կայանների տեղադրման գործընթացին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու հարցում պատրաստակամություն հայտնեցին Մարմաշեն, Վահրամաբերդ և Բյուրակ համայնքների ղեկավարները:

Աշխատանքային խորհրդակցությունից անմիջապես հետո մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության հանձնաժողովի անդամները՝ համայնքների ղեկավարների հետ, մեկնեցին տարածքներ՝ տեղերում գնահատելու վնասի չափը:

www.shirak.mtaes.am

ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

ԴԻՏԱՎԱՆՈՒՄ ԱՏԵՂԾՎԱԾ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ 26-Ն ԷՐ

Դիտավանք Տավուշի մարզի այն համայնքներից է, որտեղ վերջին տարիներին հաջողություններն ակնհայտ են՝ շնորհիվ երիտասարդ և սրտացավ համայնքի ղեկավար Հակոբ Մարիբեկյանի:

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում այս համայնքում ստեղծվեց 26-րդ կոոպերատիվը, որի նախագահ ընտրվեց երիտասարդ և գործունյա Թաթուլ Գաբրիելյանը: Համայնքի 37 անասնապահական տնտեսություններից կոոպերատիվում կամավոր սկզբունքներով անդամագրվեցին 30-ը: Բոլորին հետաքրքրում էին գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման և ենթակառուցվածքների կարգավորման խնդիրների լուծումները:

Նրանց համոզմամբ, այդ ամենի առկայության պարագայում կավելանա և անասնազխաքանակը, և արտադրանքը: Մարզում ծրագրերի համակարգող Պավել Ցուցուլյանը և Տավուշի ԳԱՄԿ-ի տնօրեն Վահան Կարապետյանը ջանք չխնայեցին ներկաներին բացատրել կոոպերատիվի առանձնահատկությունները, խնդիրները համատեղ և արդյունավետ լուծելու կարևորությունը: Ներկայացնելով կանոնադրությունը՝ նրանք մասնակիցներին հորդորեցին առավել համախմբվելով երիտասարդ ղեկավարության շուրջ՝ նպատակային օգտագործել ստեղծված հնարավորությունը:

Ս. Նազիկյան
Տավուշի ԳԱՄԿ

ՄԱՐԶՆՈՐԶՐԳԻ ՆԻՍ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Օրերս տեղի ունեցած Տավուշի մարզխորհրդի հերթական նիստին մասնակցում էր ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը:

Մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը, մարզպետ Հովիկ Աբրամյանը որոշակի տեղեկատվություն ներկայացրեց մարզում կարկտահարության հասցրած վնասների վերաբերյալ՝ նշելով, որ հանձնաժողովների կողմից կազմվել են անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և դրանք պատշաճ կերպով ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Մարզպետն անդրադարձավ

նաև առաջիկայում մարզում սպասվող ՏԻՄ ընտրություններին և համայնքների խոշորացման հարցերին:

Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Գրիգոր Փայտյանը հանդես եկավ մարզում գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի վերաբերյալ տեղեկատվությամբ: Համայնքներում սկսվել են բերքահավաքի աշխատանքները, և 11.07.2016 թվականի օպերատիվ տվյալներով, արդեն արտադրվել է 140 տ բանջարեղեն, 120 տ կարտոֆիլ, 650 տ պտուղ, 10000 տ խոտ: Կատարվել է 800 հա արտիունձ, որից 463-ը՝ աշնանացան գարի, 337-ը՝ աշնանացան ցորեն: Նշվեց նաև, որ արդեն ամփոփ ներկայացվել են վերջին

շրջանում կարկտահարությունից տուժած համայնքներում վնասի չափերի վերաբերյալ կազմված ակտերը և տեղեկություն տրվեց, որ ընթացքի մեջ են նաև ՀՀ կառավարության ծրագրի շրջանակում տրամադրվող սերմացուի հատկացման աշխատանքները: Անդրադառնալով կարկտահարության և անձրևների հասցրած վնասներին, մարզպետը հանձնարարեց քաղաքաշինության վարչության պետ Գրիշա Բադալյանին մասնագիտական օգնություն ցուցաբերել Վարագավան և Տավուշ համայնքներին, վթարված կամուրջների վերականգնման համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկման նպատակով, ինչպես նաև այդ մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան:

ԱՇԽԱՏԱԾՈՂՈՎ

ԲՐՈՒՑԵԼՅՈՋԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 12-13-ը ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ, «Տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցություն Հայաստանի անասնաբուժական ծառայություններին» ծրագրի շրջանակներում, կազմակերպել էր աշխատաժողով «Բրուցելյոզի կառավարման արդիական խնդիրները Հայաստանում և Վրաստանում, միջսահմանային համագործակցություն» թեմայով:

Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ ԳՆ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, Վրաստանի գյուղատնտեսության նախարարության Սննդի ազգային գործակալության, ՊԳԿ-ի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի, «Չարգացման և համագործակցության շվեյցարական գործակալության» (SDC/Շվեյցարիա) և «Ռազմավարական զարգացման գործակալություն» (ՌԶԳ) հասարակական կազմակերպության շուրջ 45 ներկայացուցիչներ, ինչպես նաև ՊԳԿ միջազգային և ազգային փորձագետներ: ՊԳԿ միջազգային և ազգային փորձագետները ներկայացրեցին Եվրոպական Միության և Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության բրուցելյոզի կանխարգելման և կառավարման չափորոշիչները, բրուցելյոզի կառավարման տարբեր ռազմավարությունները, Եվրոպական Միության երկրների բրուցելյոզի դեմ պայքարի միջսահմանային համագործակցության փորձը: Ծրագիրը ներկայացրեց Սյունիքի մարզում բրուցելյոզի դեմ պայքարի և պատվաստման փորձը և նախնական արդյունքները:



«2013 թ. ին մեկնարկել է «Տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցություն Հայաստանի անասնաբուժական ծառայություններին» ծրագիրը, որի շրջանակում որպես պիլոտային մարզ ընտրվել է Սյունիքը, քանի որ նախնական հետազոտությունը ցույց էր տվել, որ այդ մարզում է հիվանդության ամենամեծ տարածվածությունը: Ծրագրի շրջանակում պատվաստվել են մոտ 80,000 խոշոր և 160,000 մանր եղջերավոր անասուններ: Ծրագիրն աջակցել է նաև առողջապահական անասնաբուժական բլոկների տեխնիկական և ինստիտուցիոնալ համակարգերի հզորացմանը, իրականացրել է տեխնիկական վերապատրաստում և նախագծել բրուցելյոզի դեմ պայքարի երկարատև ծրագիր»,- նշում է ծրագրի համակարգող Չարուհի Բեգլարյանը:

Ծրագիրը համագործակցել է մի շարք առաջատար երկրների՝ Իսպանիայի և Հունաստանի մասնագետների հետ՝ փորձելով զարգացած երկրների լավագույն փորձը կիրառել Հայաստանում: Աշխատաժողովի ընթացքում միջազգային փորձագետ Ալբերտո Պաչինոն ներկայացրեց բրուցելյոզի դեմ պայքարը՝ Իսպանիայում և միջազգային համագործակցության օրինակը Իսպանիայի և հարևան երկրների միջև:

«Տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցություն Հայաստանի անասնաբուժական ծառայություններին» ծրագրի ընդհանուր նպատակն է՝ հզորացնել անասնաբուժական ծառայությունների հանրային ոլորտը՝ նպաստելով Հայաստանում սննդի անվտանգության համակարգի և գյուղատնտեսության կայուն զարգացման բարելավմանը:

Ծրագիրը ֆինանսավորվում է Չարգացման և համագործակցության շվեյցարական գործակալության կողմից և իրականացվում է ՊԳԿ-ի և ՌԶԳ-ի կողմից: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 724 324 ԱՄՆ դոլար: Ծրագրի անմիջական շահառուներն են ֆերմերներն ու Սյունիքի մարզի գյուղական համայնքների բնակչությունը: Ծրագրի ազդեցությունը սոցիալական մակարդակում կլինի գյուղի բնակչության հանրային առողջության բարելավված չափորոշիչներն ու եկամուտների աճը:

Լուսինե Ղուկասյան

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՆԵՐԿՐՈՒՄՆԵՐ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԶԱՐԳԱՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վերջերս Արարատի մարզում էր ՀՀ-ում Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկու գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էր նաև ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էրիկաս Պետրիկասը:

Մարզպետ Ռուբիկ Աբրահամյանի և հյուրերի փոխադարձ ծանոթությունից հետո, դեսպանը ներկայացրեց առաքելության նպատակը: Համաձայն տարածաշրջանների համաչափ զարգացման ծրագրի՝ խումբը նպատակ ունի ներդրում կատարել Արարատի մարզի գյուղատնտեսության ոլորտում: Սեպտեմբերին Արարատի և Արմավիրի մարզերում, համապատասխան ծրագրի հաստատումից հետո, հնարավոր է պատկառելի ներդրումներ՝ ոռոգման համակարգի զարգացման գործում: Դեսպանը հետաքրքրվեց անասնապահությամբ, ձկնաբուծությամբ և ձկնկթի արտադրությամբ: Նա նշեց, որ կան ոլորտներ, որտեղ Արարատի մարզը և Լիտվան կարող են համագործակցել:



Մարզպետ Ռուբիկ Աբրահամյանը ներկայացրեց մարզի կառուցվածքը, խոսեց կրթական համակարգի, առողջապահության, սոցիալական, քաղաքաշինության ոլորտներում ձեռքբերումների մասին: Մարզի ղեկավարը նշեց, որ գյուղատնտեսության ոլորտում, կառավարության օգնության, մարզպետարանի և համայնքապետերի համատեղ ջանքերի շնորհիվ, ավելացել են մշակվող հողատարածքների քանակը, ինչի հետևանքով մարզում աճել է ոռոգման ջրի պահանջարկը: Ոռոգման ներքին ցանցը նորացնելու համար ներդրումներ են անհրաժեշտ: Շարունակելով զրույցը՝ դեսպանը հետաքրքրվեց Արարատի մարզում արտերկրից եկած ներդրողներով, ինչպես նաև ծաղկա-

բուծական ջերմոցային տնտեսություններով: Մարզի ղեկավարի խոսքով հիմնականում տեղացի գործարարներն են ներդրում կատարողները, միաժամանակ ընդգծեց, որ կան համայնքներ, որտեղ ծաղկաբուծական ջերմոցային տնտեսությունները մեծ թիվ են կազմում, իսկ ծաղիկները իրացվում են արտերկրի շուկաներում: Մարզում գործում է նաև ձմեռային և ամառային չրանոցները, գյուղացիներից մթերված, ապա վերամշակված ու պահածոյացված արտադրանքն արտերկրի են արտահանում բազմաթիվ մթերոլ կազմակերպություններ: Չրույց ծավալվեց նաև հյուսիս-հարավ ճանապարհի շարունակության, Հայաստանի և աշխարհի տարբեր երկրներ իրար կապող նրա՝ ռազմավարական նշանակության մասին: Վերջում հանդիպումն ավարտվեց հուշանվերների փոխանակումով:

www.ararat.mtaes.am

ԴԱՍԵՆԹԱՅ

ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԱՅ ԱՅԳԵԳՈՐԾՆԵՐԻՆ

2016թ.ի հունիսի 30-ից հունիսի 1-ը ENPARD/ԵՀԳԳԾՑ «Տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը» ծրագիրը Արմավիրի և Արագածոտնի մարզերում կազմակերպել էր հերթական դասընթաց՝ «Պտղատու մշակաբույսերի Ետի և ձևավորման աշխատանքները» թեմայով, որն այս անգամ նվիրված էր վեգետացիայի ընթացքում կատարվող Ետի աշխատանքներին:



Դասընթացը վարում էր ծրագրի միջազգային փորձագետ, Հոմաի պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Դավիդ Ներին, ով ՀՀ կատարած իր նախորդ այցի ժամանակ ներկայացրել էր պտղատու մշակաբույսերի հանգստի շրջանում իրականացվող Ետի և ձևավորման առանձնահատկությունները:

Գործնական դասընթացներն անցկացվեցին Արմավիրի մարզի Ծենիկ և Արագածոտնի մարզի Փարպի և Օհանավան համայնքներում, որին մասնակցեցին ներկայացուցիչներ՝ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց ձորի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններից, Հայաստանի ազգային ագրարային համալսարանից, գիտական կենտրոններից, ինչպես նաև այգեգործներ Հայաստանի տարբեր մարզերից: Դասընթացի ընթացքում ներկայացվեց վեգետացիայի ընթացքում կատարվող Ետի առաջավոր փորձը խնձորենու, սալորենու և ծիրանենու օրինակով: Ներկայացվող մոտեցումը գրեթե չի կիրառվում Հայաստանում, սակայն կարող է մեծապես նպաստել պտղատու մշակաբույսերի աճի բարելավմանը և բերքատվության բարձրացմանը: Դասընթացներն անցկացվեցին նաև այն այգիներում, որտեղ հրավիրված փորձագետը էտ էր կատարել դեռևս ապրիլ ամսին՝ ցուցադրելով նախորդ անգամ կատարած Ետի առավելությունները՝ որպես համեմատություն՝ Հայաստանում ընդունված պտղատուների Ետի և ձևավորման ավանդական տեխնիկայի:

«Ծրագիրը շարունակում է կազմակերպել դասընթացների շարք՝ նվիրված պտղատու մշակաբույսերի մշակության, Ետի և ձևավորման գյուղատնտեսական լավագույն և առաջավոր փորձի տարածմանը: Ծրագրի շրջանակներում այս թեմայով կնախապատրաստվի նաև ձեռնարկ՝ նվիրված ՀՀ-ում առավել տարածված չորս մշակաբույսերի՝ խնձորի, դեղձի, ծիրանի և կեռասի այգիների Ետին և ձևավորմանը, որի պատրաստմանը նույնպես կօժանդակեն իտալացի գործընկերները»,- նշում է ՊԳԿ ENPARD/ԵՀԳԳԾՑ «Տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը» ծրագրի ղեկավար Վահան Ամիրխանյանը:

Լուսինե Ղուկասյան

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԱՌԿԱ Է ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ձորագյուղ համայնքում, մինչ «Արտոպայրերի բարելավման ծրագրի» իրագործումը, մասնակիորեն էին օգտագործվում թե արտոպայրերը, և թե՛ վարելահողերը: Սակայն պարկերը փոխվեց՝ սկսած 2013 թ.-ից, երբ ձևավորվեց Ձորագյուղ համայնքի «Արտոպայրագործողների միավորում» սպառողական կոոպերատիվը՝ 230 անդամով:



Գյուղատնտեսական տեխնիկայի բացակայության պատճառով համայնքի շուրջ 1000 հա վարելահողերը գրեթե չէին մշակվում: Այժմ արդեն ձեռք են բերել 3 միավոր տրակտոր: Համայնքի ղեկավար Լևիկ Գրիգորյանի տեղեկացմամբ, այսօր արդեն մշակվում է վարելահողերի 50-60 %-ը: Ձորագյուղը հարուստ է արտոպայրերով, առկա 3000 հա արոտներից 500 հա գյուղի մերձակայքում է, 2500 հա-ը՝ հեռագնա: Գյուղապետի կարծիքով, հեռագնա արոտների սակավ օգտագործումը պայմանավորված է խմելու ջրի բացակայությամբ: Արտոպայրերի ջրարբիացման ծրագրի իրականացման արդյունքում տեղադրվել են 4 խմոցներ: Կատարված նախնական հաշվարկներով պարզվել է, որ ավելի քան 15%-ով բարձրացել է կենդանիների կաթնատվությունը, 20 %-ով՝ մսատվությունը: Արձանագրվել է նաև անասնազխաքանակի աճ: Լևիկ Գրիգորյանի տվյալներով, մինչ ծրագրի իրականացումը, գյուղում հաշվ-

վում էր ընդամենը 1200 գլուխ խոշոր և 1500 գլուխ մանր եղջերավոր կենդանի: Այժմ արդեն խոշոր եղջերավոր կենդանիների թիվը հասել է 2700, մանրիկները՝ 3000 գլխի: «Կուզենայի, օգտվելով ինձ ընձեռված հնարավորությունից, շնորհակալական խոսք ասել ՀՀ կառավարությանը, գյուղատնտեսության նախարարությանը, «ԳԾԻԳ» ՊՀ-ին, «Հեյֆեր-Հայաստան» կազմակերպությանը և բոլոր այն անձանց, ովքեր նման ծրագրի իրականացումով, իրոք, կանգնեցին գյուղացու կողքին: Այսօր գյուղացին ունի գյուղատնտեսական տեխնիկա և գործիքներ, կառավարության սուբսիդավորմամբ էլ ստանում է պարարտանյութեր, սերմացու, դիզելային վառելիք: Ստեղծված կոոպերատիվն էլ նպաստում է գյուղացու եկամտի ավելացմանը: Առկա է պետության օժանդակությունը՝ խնդիրների կարգավորման գործընթացում», - փաստում է համայնքի ղեկավարը: Գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալի ավելացման առումով՝ Ձորագյուղում առաջընթաց է արձանագրվել: Զարգացած անասնաբուծություն և բուսաբուծություն ունեցող Ձորագյուղում խնդիրները համատեղ լուծելու հնարավորությունը գյուղացիներին համախմբում է կոոպերատիվի շուրջը: Նկատելի է նաև արտագնա աշխատանքի մեկնողների թվի նվազումը: «Հիմա գյուղացին արդեն լծվել է գյուղատնտեսական աշխատանքներին: Նախկինում, տեխնիկայի բացակայության պատճառով, չէր հնձվում Ձորագյուղի խոտհարքների 50-60%-ը: Կոոպերատիվի ձեռք բերած ձեռքի խոտհնձիչները հատկացվում են գյուղացիներին, ժամանակին և անկորուստ է կատարվում խոտհնձը, հավաքման և տեղափոխման աշխատանքները: Կոոպերատիվի տեխնիկայից օգտվում են թե անդամակցողները, և թե՛ ոչ անդամները», - նշել է Լևիկ Գրիգորյանը:

Նեյի Սահակյան

ԳԵՂՀՈՎԻՏՈՒՄ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է ԿՈՈՊԵՐԱՑԻՎԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքի «Արտոպայրագործողների միավորում» սպառողական կոոպերատիվը, որը ձևավորվել է 2013 թ.-ին, ունի 465 անդամ: Համայնքի ղեկավար Վարդան Պողոսյանի կարծիքով, «Արտոպայրերի բարելավման ծրագրի» գյուղացու համար երբեմնի իրականացված ծրագրերից լավագույնն է, որը հնարավորություն ընձեռեց լիովին նորացնել գյուղատնտեսական տեխնիկան:

«Եթե առկա է տեխնիկան, գյուղացին այլևս խնդիր չունի, մնացածն իր ձեռքի գործն է», - եզրահանգում է Գեղհովիտ համայնքի ղեկավար Վարդան



Պողոսյանը: Ի տարբերություն նախկինի՝ գեղհովիտցիներն այժմ առանց դժվարությունների են իրականացնում վարի, ցանքի, խոտհնձի և խոտի հավաքման աշխատանքները: «Տեխնիկան կազմ պատրաստ սպասում է աշխատանքի: Նախկինում, խոտհնձից հետո, տեխնիկայի բացակայության պատճառով, բերքը 20 օր, երբեմն նաև՝ 1 ամիս, մնում էր դաշտում և աստիճանաբար որակազրկվում: Հիմա բերքահավաքի գործընթացը տևում է ընդամենը 3 օր, մեկ օր հնձվում է խոտը, հաջորդ օրը՝ չորանում, 3-րդ օրը, ստացված տեխնիկայով հավաքվում է և տեղափոխվում տնտեսություն: Ի պատիվ կոոպերացիայի և իրականացվող ծրագրի, մենք խնդիրներ չունենք», - նշում է գյուղապետը: Կոոպերատիվին հատկացվել է 3 միավոր «Բելառուս» MT3 մակնիշի տրակտոր, նույնքան գութաններ և մամիչներ, ինչպես նաև՝ խոտհնձիչներ, մի խոսքով, այն ամենը, ինչ հարկավոր է գյուղատնտեսական աշխատանքների լիարժեք կատարման համար:

Դեռևս 2015 թ.-ին Գեղհովիտի արտոպայրերում տեղադրվել են 3 խմոցներ, որոնց ջրամատակարարման համար կառուցվել է նաև ջրամբար: Նախկինում, երբ գյուղատնտեսական կենդանիները գնում էին դաշտ, ջուր չկար: Ջրի պակասի պատճառով, ցածր էր կաթնատվությունը: Խնդրի լիարժեք լուծման նպատակով այս տարի կտեղադրվի ևս 3 խմոց: «Այդպիսով, «Արտոպայրերի բարելավման ծրագիրը» մեր գյուղում իրականություն դարձավ: Նախկինում ոչ ոք չէր պատկերացնում,

որ ծրագիրն այդպիսի հաջող ընթացք կունենա: Գյուղացիները գործնականում տեսան արված գործերն ու հիմա նրանք արդեն հավատում են կոոպերացիայի հաջողությանը», - հավելում է գյուղապետը:

Հեռագնա արտոպայրերում 1200 գլուխ կենդանիների համար կառուցվել է ամառային կացարան (փարախ), իսկ անասնապահների համար՝ հարմարավետ հովվատուն: Կոոպերատիվի անդամներին պատկանող կենդանիներին կերով ապահովվելու նպատակով, ընթացիկ տարում ցանվել է 7 տեսակ կերային մշակաբույս: Դրանք հիմնականում բազմամյա խոտաբույսեր են, որոնց շնորհիվ կենդանիները կստանան լիարժեք կեր: Այս տարի ստացվել է խոտի առատ բերք, որն ամբողջությամբ հավաքվել է և պահեստավորվել է: Այդպիսով՝ ստեղծվել են բոլոր պայմանները, որպեսզի Գեղհովիտում անասնապահությունն արագորեն զարգանա, քանի որ ճյուղն էլ արդեն դառնում է շահութաբեր: Գյուղում առկա է 3300 գլուխ խոշոր, 1900 գլուխ մանր եղջերավոր կենդանի: Գյուղապետի տեղեկացմամբ, խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը, կոոպերատիվի գործունեության արդյունքում, ավելացել է 220 գլխով: Արտոպայրերը գտնվում են գյուղից 2-ից 13 կմ հեռավորության վրա, որտեղ կարելի է արածեցնել ավելի քան 1000-1200 խոշոր եղջերավոր կենդանի: «Ուշագրավն այն է, որ կոոպերատիվին անդամակցում էին նաև այնպիսի անձինք, ովքեր ընդհանրապես անասնապահությամբ չէին զբաղվել: Սակայն կոոպերատիվին միանալուց հետո սկսել են գյուղատնտեսական կենդանիներ պահել, նույնիսկ ավելացնում են գլխաքանակը: Տեխնիկայի հասանելի լինե-



լուց բացի, գրավիչ պայմաններից մեկն էլ կատարվող ծառայությունների մատչելիությունն է: Ի դեպ, այդ արտոնյալ պայմաններից օգտվում են նաև կոոպերատիվին չանդամակցող գյուղացիները», - պատմում է գյուղապետը:

Արտոպայրերի բարելավումով միաժամանակ նաև բնապահպանական խնդիր է լուծվում, քանի որ կանխվում է հողի շերտի դեգրադացումը: Գեղհովիտ համայնքի «Արտոպայրագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի նախագահ Արմեն Մնացականյանի տվյալներով, օրեցօր ավելանում է կոոպերատիվին անդամակցողների թվաքանակը: Նրա տեղեկացմամբ, կոոպերատիվին անդամակցելու նպատակով օրերս ստացվել է ևս 4 դիմում:

Նեյի Սահակյան

ՂԱՍԸՆԹԱՅ

Մասնագիտական կարողությունների բարձրացում

Օրերս «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» շրջանակներում Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի կողմից Շիրակի ԳԱՄԿ-ի խորհրդարանների և մասնագետների համար անցկացվեցին ուսուցողական դասընթացներ:

Դասընթացների մեկնարկից առաջ Շիրակի ԳԱՄԿ-ում հյուրընկալված գիտնականներին ողջունեց տնօրեն Զիվան Ասլանյանը: Պարոն Ասլանյանը կարևորեց խորհրդատուների մասնագիտական կարողությունների բարձրացմանը նպաստող ուսուցողական դասընթացների անցկացումը: Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկավ ԳԱՀԿ-ի տնօրենի տեղակալ Ա. Հայրապետյանը, իսկ հետո ուսուցանողներ՝ գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ռազմիկ Սահակյանը (Մենդի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն), անասնաբուծական գիտությունների թեկնածու Արթուր Մկրտչյանը (Հայաստանի ազգային ագրարային համալսարան) և կենսաբանական գիտությունների թեկնածու Ալֆրեդ Գրիգորյանը հանգամանալից ներկայացրեցին ուսուցանվող թեմաները, պատասխանեցին ուսուցման մասնակիցների կողմից տրված հարցերին:

Դասընթացների թեմաներն էին՝ «Ոչ ավանդական և հատիկաընդեղեն մշակաբույսերի (հնդկացորեն, չաման, ոսպ, ոլոռ, սիսեռ) նոր տարտերի մշակության տեխնոլոգիան, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումները», «Տավարի արյան մակաբուծային հիվանդությունների կանխարգելման եղանակները» և «Հացագզի մշակաբույսերի, կարտոֆիլի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումների կիրառումը»:

Դասընթացի ընթացքում ներկայացված ուսուցանվող թեմաները ուղեկցվում էին ցուցադրական նյութերով: Ուսուցման վերջում, բոլոր մասնակիցներին բաժանվեցին ուսուցողական նյութերի փաթեթներ, իսկ դասընթացի մասնակիցների կողմից լրացվեցին «Ուսուցման գնահատման հարցաթերթիկներ»:

Շիրակի ԳԱՄԿ

ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈԾԻՔՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԼԱՋԵՐԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

«Լազերային տեխնոլոգիաներ» ընկերությունը (LaseRTech) սննդի արտադրության համար մեծածավալ աշխատանքներ է իրականացնում՝ արտադրելով սարքավորումներ և փառանքներ, որոնք պարտադրվում են էկոլոգիապես մաքուր և անվտանգ նյութերից: Պարտադրի արտադրանքն օգտագործվում է ջրի, գինու, կաթի, մեղրի և այլ սննդամթերքների արտադրման գործընթացում:

Ընկերության հիմնադիր նախագահ, տնօրեն Մանուկ Մանուկյանն ավարտել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը, աշխատանքի անցել «Հայգյուղմեխանիզացիա» գիտաարտադրական միավորումում, մասնակցել է աղակալած հողերի դաշտերը հարթեցնելու աշխատանքներին՝ լազերային համակարգերի միջոցով: Այդ աշխատանքների կատարման ժամանակ նրան խնդրել են զբաղվել խաղողագործության մեջ օգտագործվող գործիքների ստեղծմամբ: Նախկինում ստեղծված գործիքները որոշ թերությունների պատճառով չօգտագործվեցին: Տարիներ անց Մ. Մանուկյանը ձեռնամուխ եղավ հիմնելու գյուղատնտեսական գործիքների, սարքավորումների սեփական արտադրությունը, այդ գործիքներն այսօր արտահանվում են ԱՄՆ, Իտալիա, ՌԴ և Վրաստան: Արտադրամասի գործունեության մասին զրույցը ներկայացնում են ստորև:

- Պարոն Մանուկյան, Ձեր հիմնադրած ընկերությունում արտադրված արտադրատեսակները որտեղ են օգտագործվում:

- Երկար տարիներ կատարելագործել են գյուղատնտեսական գործիքների աշխատանքի սկզբունքը: Ստեղծեցի գործիք, տարբեր տեսակի կաղապարներ, պրեսներ, շտամպներ, որոնց միջոցով հնարավոր կլինի աշխատանքն առավել հաճելի դարձնել: Այժմ այդ գործիքները արտադրության ճանապարհին են, արտահանում ենք տարբեր երկրներ, շուտով պատրաստվում ենք արտահանել նաև Գերմանիա: Մենք արտադրում ենք «Manfix» գյուղատնտեսական սարքը, որը հնարավորություն է տալիս խաղողի, անփուշ մոշի ճյուղերն ամրացնել լարերին, այն շատ հուսալի է, և ոչ մի քամի, նույնիսկ փոթորիկ չի կարող վնասել: Պանրագործների համար արտադրում ենք սեղաններ, վաննաներ, գինեգործների համար՝ 500լ-ից մինչև 10 տ տարողությամբ տարաներ:



- Արտադրված գյուղատնտեսական տարաները և գործիքները. ինչ նյութերից են պատրաստված:

- Նյութը, որից մենք պատրաստում ենք, պոլիպրոպիլեն է, որը համարվում է ֆիզիոլոգիապես սննդային անվտանգ նյութ: Այն բոլոր տեսակի հիմնային, թթվային նյութերի նկատմամբ չեզոք է, դրանք չեն քայքայում, հետևաբար չի քայքայում նաև գինու թթուն: Ավելացնեն նաև, որ պոլիպրոպիլենը բաց է թողնում նաև թթվածին, այսինքն դա այն գործընթացն է, որն ապահովում է գինին արտադրելու համար անհրաժեշտ խմորումը:

Ասում են, որ տակառը փայտից պետք է լինի, որպեսզի թթվածին արտադրվի, բայց մեր օգտագործած նյութը ևս թթվածին է բաց թողնում, միայն այն տարբերությամբ, որ գինին մտնում է փայտի մեջ, հետագայում նեխում ու առաջանում է վարակ, որը պետք է լվալ բազմաթիվ անգամ, մեզ մոտ այդ խնդիրը չկա: Մեր պապերը ժամանակին պատրաստել են կարասներ և մեջք ճրագու են քսել, իսկ հիմա պարաֆին: Մեր այս նյութը ճրագուից պարտադրված սննդային նյութ է, ունենք սերտիֆիկատ, որը հավաստում է նյութի անվտանգ լինելը: ՀՀ գինեգործների միության նախագահին իր արտադրությունում օգտագործում է մեր արտադրած տարաները, շատ գոհ է և այն եզրակացությանն է եկել, որ դրա մեջ ստեղծված գինին շատ ավելի լավն է:



- Խաղողագործության, պանրագործության մեջ, աշխատանքների թեթևացման համար, ինչ սարքավորումներ եք առաջարկում:

- Ամեն տարի նկատում են, որ խաղողագործները դժվարանում են իրացնել խաղողը: Մեր ընկերությունը կարող է ստեղծել համալիր արտադրություն, սկսած խաղողի ճզմելուց, մինչև գինու արտադրության վերջնական փուլը, որը կբերի նրան, որ ամեն ֆերմեր կամ ֆերմերային տնտեսություն կարողանա խաղողից ստանալ գինի, ինչպես ամբողջ աշխարհում է: Ես եղել եմ Իտալիայում, Պորտուգալիայում, այնտեղ յուրաքանչյուր խաղողագործ արտադրում է իր գինին: Պանրագործներն օգտագործելով փայտյա իրեր՝ որքան էլ լվանում են դրանք, միևնույն է, միկրոբներն ու հոտը չի վերանում: Նրանք արդեն սկսել են հրաժարվել փայտից, անցել են մեր արտադրած կաղապարների ու պրեսների օգտագործմանը, շատ գոհ են:

- Ձեր ընկերության անվանումը հուշում է, որ լազերային արտադրության գործունեություն եք ծավալում, ինչ սարքավորումներ են և որտեղ են օգտագործվում:


- Այո, քանի որ լազերային ընկերություն է, մեր լազերային արտադրանքը հասել է այն մակարդակի, որ կարող ենք ճանապարհաշինական մեքենաները դեկավարել՝ ըստ նախագծի: Այսինքն, մեր լազերը տեղադրվում է ճանապարհի կողքին, լազերային համակարգը կարողանում է շինարարական մեքենաներին տալ շարժման ուղղություն՝ հողին համապատասխան թեքություն տալու համար: Այսպիսի բան աշխարհում դեռ գոյություն չունի: Մեր երկրում ճանապարհներ, երկաթգիծ կառուցելու դեպքում, օգտագործելով այս նախագիծը, կստանանք 20-30 % տնտեսում: Մ. Մանուկյանի արտադրամասում պատրաստ էր նաև սարքավորումի փոքր տարբերակը, որը կցուցադրի, կճանոթացնի, թե լազերն ինչպես պետք է կիրառել:

Մանվել Կիրակոսյան

ՀԱՍՄՅՆՔԱՅԻՆ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ՝ ԸՆԴԴԵՄ ԳԼՈՒԲԱԼ ՏԱՔԱՑՄԱՆ

Մոլորակին մտահոգող գերակա խնդիրներից մեկը գլոբալ տաքացումն է, որի մեղմման կամ կանխարգելման նպատակով, աշխարհի տարբեր երկրներում բնապահպանական տարաբնույթ միջոցառումներ են իրականացվում: Այդպիսի նախաձեռնությամբ հանդես են եկել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի բնակիչները:

Մեկ անգամ չէ, որ Սարուխանի բնակիչները, գյուղապետ Վահան Գևորգյանի առաջարկով, հանդես են եկել հետաքրքիր և ուշագրավ նախաձեռնություններով: Դրանցից մեկը վերաբերում է գլոբալ տաքացման կանխարգելմանն ու փոքր ինչ մեղմմանը: Այդ նպատակով սարուխանցիները որոշել և ավելացնում են ցանքատարածքները՝ մշակության տակ դնելով նաև ոչ ավանդական մշակաբույսեր: «Ոչ մի թիզ հող անմշակ չի մնալու, յուրաքանչյուր հողակտոր պետք է մշակվի արդյունավետորեն, այդպիսով կավելանա նաև կանաչ գոտին», - ասում է գյուղապետը:



Սարուխանում կատարվել է 1063 հա գարնանացան, որից միայն 470 հա բաժին է ընկնում կարտոֆիլին: Աշնանացանի ցանքատարածքները կազմում են 200 հա, կատարվել է նաև 753 հա գարնանացան հացահատիկի ցանք: Գյուղաբնակներն արդյունավետորեն են օգտագործել նաև տնամերձ հողատարածքները, որոնք ամբողջությամբ դրել են բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքի տակ: Ցանել են լոբի, կաղամբ, բազուկ, սիսեռ և այլ մշակաբույսեր, որոնցից բարձր բերք է ստացվում:

Գյուղում զգալի տարածքներ են զբաղեցնում նաև կտավատի ցանքերը: Ի դեպ, այս տարի փորձնական ցանել են նաև հնդկացորեն, լավագույն արդյունք ստանալու դեպքում կկատարեն նաև զանգվածային ցանք:

Գյուղապետի տեղեկացմամբ, ընթացիկ տարում սարուխանցիները ձեռք են բերել պահանջվող քանակությամբ սուբսիդավորված պարարտանյութ, սերմացու և դիզվառելիք: «Մեր ծրագրերի իրականացման և մեզ աջակցելու նպատակով կառավարության կողմից արվում է հնարավորը: Եթե դրան էլ ավելացնել գյուղացու ջանադիր աշխատանքը, ապա արդյունքն աննախդեպ կլինի», - նշում է Վահան Գևորգյանը: Նշենք նաև, որ գյուղապետը մասնագիտությամբ գիտնական-գյուղատնտես է, և իր մասնագիտական կարողությունները կիրառում է ոլորտի զարգացման համար:

Շուրջ 40 տարվա աշխատանքային փորձի շնորհիվ, թե Վահան Գևորգյանը, և թե գյուղապետարանի աշխատակազմը, բազմիցս պարգևատրվել են շնորհակալագրերով, պատվոգրերով և մեդալներով:

Վերջերս այդ պարգևների թվին ավելացավ ևս մեկը. ՀՀ գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար, Վահան Գևորգյանն արժանացել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալի:

Վահան Գևորգյանը նաև «Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ-ի Գեղարքունիքի մասնաճյուղի նախագահն է: Ի դեպ, գյուղապետը նաև հմուտ մեղվաբույծ է, ինսամում է 100 մեղվաընտանիքներ՝ տարեկան ստանալով 3-4 տոննա բարձրակ մեղր, որն անմիջապես սպառվում է:

Նելլի Սահակյան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ՄԱՏՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գյուղատնտեսական կենդանիների մատղաշի հիվանդությունները, հատկապես մարսողական համակարգի ախտաբանությունը, զգալի փորձածում են գտել Հայաստանի Հանրապետության անասնապահական տնտեսություններում՝ տնտեսական մեծ վնաս հասցելով անասնապահությանը: Մատղաշի մարսողական համակարգի հիվանդությունների առաջացումը մեծապես պայմանավորված է նորածինների թերզարգացումով / հիպոպրոֆիա/, որը սկիզբ է առնում ներարգանդային շրջանում՝ պարզ գարգացման համար անհրաժեշտ պայմանների բացակայությունից: Մատղաշի հիպոպրոֆիայի առաջացմանը նպաստում են հղի կենդանիների ոչ ճիշտ խնամքը և կերակրումը, ինչը անբարենպաստ ազդեցություն է թողնում պարզի վրա:



Է 2-3 ամսական հորթեր մոտ կաթնային շրջանից սովորական կերերին անցնելու ժամանակահատվածում: Հիվանդությունը առաջանում է այն ժամանակ, երբ կյանքի առաջին ամիսներին կենդանիներին չեն տալիս որոշակի քանակությամբ խոտ և համակցված կերեր, իսկ ավելի ուշ այդ կերերը նրանց կերաբաժին մտցնելը հանգեցնում է կտրիչի ֆունկցիայի խանգարմանը, երբ կտրիչի միկրոֆլորան ի վիճակի չի ապահովել կերերի նորմալ մարսումը: Հիվանդությունը ուղեկցվում է կտրիչի փքանքով, որովայնի ծավալի մեծացումով, աղիների զալարակծկանքի ուժեղացումով, կենդանիների անհանգստությունով, սիրտանոթային և շնչառական համակարգերի գործունեության խանգարումով:

Գյուղատնտեսական կենդանիների մատղաշի մարսողական համակարգի հիվանդությունների զարգացման գործընթացում մեծ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ նրանց ֆիզիոլոգիական ֆունկցիաներն անցնում են ձևավորման փուլ, ինչը մատղաշ կենդանիներին ավելի զգայուն է դարձնում հիվանդությունների նկատմամբ:

թունավոր դիսպեպսիայի ժամանակ ի հայտ են գալիս նաև ինտոքսիկացիայի երևույթներ: Բուժումը պետք է ուղղված լինի օրգանիզմի ջրազրկման կանխարգելմանը, մարսողության կարգավորմանը, ստամոքսաղիքային ուղիների դիսբակտերիոզի վերացմանը:

Բուժումը ուղղված է կտրիչից գազերի դուրս բերմանը, կտրիչում խմորման գործընթացների դադարեցմանը, սիրտանոթային համակարգի գործունեության բարելավմանը:

Գյուղատնտեսական կենդանիների մատղաշի մարսողական համակարգի հիվանդությունների շարքում առաջնային տեղ է գրավում նորածինների դիսպեպսիան, որն կարող է հանգեցնել գլխաքանակի 50-100% անկմանը: Տնտեսական վնասը կազմված է գլխաքանակի անկումներից, սերից:

Մատղաշ կենդանիների շրջանում տարածված է նաև գաստրոէնտերիալ հիվանդությունը, որն իրենից ներկայացնում է ստամոքսի և բարակ աղիքների բորբոքում, բորբոքման գործընթացների մեջ հաստ աղիքների ընդգրկումը ստացել է գաստրոէնտերոկոլիտ անվանումը: Գաստրոէնտերիտն ուղեկցվում է մարսողության խանգարումով և օրգանիզմի ջրազրկումով: Այն կարող է հանգեցնել գլխաքանակի մեծ անկումների: Գաստրոէնտերիտով հիվանդանում են գյուղատնտեսական բոլոր կենդանիների մատղաշները: Հիվանդության պատճառ են՝ մայրերի կաթի սակավ լինելը, լրացուցիչ կերեր ժամանակից շուտ կամ ազատորեն ուտելը, անասնաշենքերի վատ ամփոփարակիչ հիմքի պայմանները, մսուրների և ջրամանների աղտոտվածությունը և այլն:

Բեզոարային հիվանդություն: Այն ուղեկցվում է բրդակերությունով, ախորժակի այլասերումով, ֆիտոբեզոարների և պիլոբեզոարների առաջացումով, 12 մատնյա աղիքի խցանումով: Հանդիպում է գառների և հազվադեպ հորթերի մոտ: Պատճառ է հանդիսանում մայր ոչխարների մոտ կաթնատվության նվազումը /հիպոգալակտիա/, որի հետևանքով մատղաշի մոտ զարգանում է սպիտակուցային, վիտամինային և հանքային քաղց և կենդանիները սկսում են բուրդ, օտար առարկաներ և կոպիտ կերեր ուտել: Հիվանդությունն ուղեկցվում է ախորժակի այլասերումով, կենդանիների հյուծումով, ռումինացիայի թուլացումով, փորլուծով, ծակոցների երևույթներով: Բուժման նպատակով ոչխարների և գառների կերաբաժինների մեջ ներառում են հանքային նյութեր, մարսողության խանգարման դեպքում նշանակում են լուծողականներ և լորձնային խաշուկներ:

Դիսպեպսիան: Նորածին, 1-10 օրական, խիժային շրջանի կենդանիների հիվանդություն է, որն ուղեկցվում է ստամոքսի և աղիների հյուսվածքում, ֆերմենտատիվ, շարժողական ֆունկցիաների, նյութափոխանակության խանգարումներով, անմարսելիությունով և օրգանիզմի ջրազրկումով: Դիսպեպսիայով հիվանդանում են գյուղատնտեսական բոլոր կենդանիների մատղաշները, սակայն առավել հաճախ այն հանդիպում է հորթերի մոտ:

Մատղաշ կենդանիների շրջանում տարածված է նաև գաստրոէնտերիալ հիվանդությունը, որն իրենից ներկայացնում է ստամոքսի և բարակ աղիքների բորբոքում, բորբոքման գործընթացների մեջ հաստ աղիքների ընդգրկումը ստացել է գաստրոէնտերոկոլիտ անվանումը: Գաստրոէնտերիտն ուղեկցվում է մարսողության խանգարումով և օրգանիզմի ջրազրկումով: Այն կարող է հանգեցնել գլխաքանակի մեծ անկումների: Գաստրոէնտերիտով հիվանդանում են գյուղատնտեսական բոլոր կենդանիների մատղաշները: Հիվանդության պատճառ են՝ մայրերի կաթի սակավ լինելը, լրացուցիչ կերեր ժամանակից շուտ կամ ազատորեն ուտելը, անասնաշենքերի վատ ամփոփարակիչ հիմքի պայմանները, մսուրների և ջրամանների աղտոտվածությունը և այլն:

Բուժման նպատակով ոչխարների և գառների կերաբաժինների մեջ ներառում են հանքային նյութեր, մարսողության խանգարման դեպքում նշանակում են լուծողականներ և լորձնային խաշուկներ:

Դիսպեպսիան զարգանում է թույլ դիմադրողականություն ունեցող, թերզարգացած, սթրեսային գործոնների ազդեցության նկատմամբ զգայուն մատղաշ կենդանիների մոտ: Տարբերակում են հասարակ և թունավոր դիսպեպսիա: Հիվանդության հիմնական պատճառներ են՝ նորածինների սխալ կերակրումը, կերակրման ռեժիմի խախտումը, վատորակ, սառը խիժով և դրա տալու կանոնների խախտումը: Դիսպեպսիան արտահայտվում է փորլուծով, կենդանու հյուծումով, օրգանիզմի ջրազրկումով, սիրտանոթային և շնչառական համակարգերի գործունեության խանգարումով, իսկ

ախտաձևի մանրէներով, վատորակ խիժով կերակրելը, վատորակ ջուր տալը և անորակ լրացակերերով կերակրելը: Գաստրոէնտերիտն արտահայտվում է մարմնի ընդհանուր ջերմության բարձրացումով, որոճողների մոտ որոճի վերացումով, փորլուծով, օրգանիզմի ջրազրկումով, սրտանոթային և շնչառական համակարգերի գործունեության խանգարումներով, ինտոքսիկացիայի նշաններով: Բուժումը ուղղվում է ստամոքսում և աղիքներում բորբոքային երևույթների, դիսբակտերիոզի, օրգանիզմի ջրազրկման և ինտոքսիկացիայի նշանների վերացմանը, մարսողական համակարգի բնականոն գործունեության վերականգնմանը:

Խոնկորների թունավոր հեպատոդիստրոֆիան ուղեկցվում է լյարդի կազմափոխությունով և նրա ֆունկցիայի խանգարումով

Հիվանդանում են կաթնային շրջանում և մայրերից անջատված խոնկորները: Հիվանդության պատճառները է խոնկորներին ինչպես նաև նրանց մայրերին փչացած կերերով կերակրելը: Հիվանդությունը ընթանում է սուր, ենթասուր և խրոնիկական ձևերով: Այն ուղեկցվում է ախորժակի նվազումով, մարմնի ջերմաստիճանի բարձրացումով, մարսողության խանգարումով և նյարդային երևույթներով: Բուժումը ուղղված է օրգանիզմից թունավոր նյութերի հեռացմանը, մարսողության կարգավորմանը և նյարդային երևույթների վերացմանը:

Հորթերի պարբերական փքանք: Սա հանդիպում

Է. Նիկողոսյան ՀԱԱՀ, անասնաբուժական գիտությունների թեկնածու

ՀԱՄԵՄՈՒՆՔՆԵՐ

Արևելյան, հատկապես արաբական երկրներում մեծ ուշադրության են արժանի արաբական խոհանոցի բաղկացուցիչ մաս կազմող համեմունքները: Արաբական խոհանոցում գործածվում են համեմունքների որոշ հիմնական տեսակներ, որոնք կիրառելի են նաև Հայաստանում: Դրանց կարելի է գատել միմյանցից գույնով, հոտով և իմանալ՝ որ կերակրատեսակը համեմել դրանցով: Շատ է գործածվում քիմիոն, մշկակույզ, հիլ, սումախ, չաման, անիսոն, դարչին և այլն:

պարունակվող եթերային յուղը (3, 5-7%) կիրառվում են նոդի, ծխախոտի արտադրության, ինչպես նաև բժշկության մեջ: Չնայած այն հանգամանքին, որ համեմունքը ծագում կապված է Յնդկաստանի հետ, այսօր հնարավոր է արաբական սուրճը պատկերացնել առանց այս համեմունքի փոշու: Այն հիմնականում կիրառվում է ըմպելիքները համեմելու համար:

Մեր օրերում բազմաթիվ արաբական ծագում ունեցող համեմունքներ օգտագործում են նաև հայերը՝ չիմախով ծագման ու ճիշտ օգտագործման եղանակներն ու ձևերը:

Քիմիոն: Թեև քիմիոնի հայրենիքը Եգիպտոսն է, բայց այսօր այն կիրառվում է արաբական շատ երկրներում: Կծու սուր հոտով համեմունք է: Ավելի լավ է զգուշորեն գործածել: Վաճառվում է հատիկով և աղացած (փոշի): Անհիշելի ժամանակներից Nigella sativa միամյա խոտաբույսի սերմերը բարձր են գնահատվել իրենց բուժիչ հատկությունների համար: Այն կոչվում է տարբեր ձևերով. հռոմեական գինձ, սև քունջուր, սև քիմիոն, սոխի սերմեր: Շատ հաճախ բույսը հիշատակվում է որպես «սև սերմ», ինչը նրա արտաքին տեսքի ճշգրիտ նկարագիրն է:

որը հայտնաբերվել է Եգիպտական փարավոն Թութանհամոնի դամբարանում, կազմում է 3300 տարի: Արաբական մշակույթում սև քիմիոնը հայտնի է որպես «habbatul barakah», որը նշանակում է «օրհնության սերմ»: Ըստ մուսուլմանների սուրբ գրքի՝ Մուհամմադ մարգարեն այն անվանել է «բուժամիջոց բոլոր հիվանդությունների համար, բացի մահից»: Առավել շատ գնահատվել է դրանց մարսողությունը բարելավելու և աղեստամոքսային խանգարումները բուժելու հատկությունը: Սերմերն օգտագործել են նաև սրտանոթային և շնչառական հիվանդությունների, գլխացավի և լյարդի ու երիկամների հիվանդությունների ժամանակ: Սերմերից պատրաստված դեղորայքով բուժել են բորոտությունը, մաշկային հիվանդությունները և երկար չապաքինվող վերքերը:



որը կերակրատեսակներում կարող է նաև փոխարինել կիտրոնի: Ծագում է միջերկրածովյան երկրներից, իսկ Մերձավոր Արևելքում աճեցվում է Իրանում:

Կերակրող կանանց կաթնարտադրությունը բարձրացնելու համար խորհուրդ է տրվում սև քիմիոն օգտագործել: Սև քիմիոնը չունի հակացուցումներ, քանի որ քիմիոնը մաքրում է օրգանիզմը, այն արգելվում է օգտագործել միայն հղի կանանց, իսկ սև քիմիոնի յուղը բարելավում է մաշկը, օգնում է ճաղատության դեպքում, վերականգնում է սպիտակ մազերի գույնը: Յուղը նաև բարելավում է արյան շրջանառությունը, բարձրացնում է հեմոգլոբինի մակարդակն արյան մեջ:

Սումախ: Թթվահամ համեմունք է,

Սև քիմիոնի ծննդավայրը Մերձավոր Արևելքը, որտեղից այն հետագայում տարածվել է ողջ Ասիական մայրցամաքով, թափանցել է դեպի Եվրոպայի հարավ և Հյուսիսային Աֆրիկա: Այսօր բույսն աճեցնում են աշխարհի շատ երկրներում: Սև քիմիոնն աշխարհի ամենահին համեմունքներից և դեղաբույսերից մեկն է: Քիմիոնի մշակման և օգտագործման ամենավաղ գրառումը հայտնաբերվել է հին Եգիպտոսում: Սև քիմիոնի յուղի մոտավոր տարիքը,

Լիլիթ Գասպարյան

ՀԵՏԱԲՐՔԻՐ Է...

ԶԱՆԳԱԿՆԵՐ...

Զանգակների ցեղն ընդգրկում է մոտավորապես 475 (GRIN) տեսակներ, որոնք միամյա, երկամյա կամ բազմամյա խոտաբույսեր են: Դասակարգում են նաև ըստ բարձրության. բարձր՝ 70-150 սմ, միջին՝ 20-70 սմ ու ցածր՝ 5-20 սմ: Ըստ ցողունի կառուցվածքի ու տեսքի՝ լինում են ուղղաձիգ, ամուր, խավապար, ճյուղավոր կամ խոնարհվող, ճկվող, հարթ, պարզ. դրանք տարբերակում են՝ ըստ տեսքերի ձևի ու դասավորության, արմատի կառուցվածքի, ծաղկեպսակի երկարության ու բացվածքի չափի, մանուշակագույնի ու կապույտի երանգների և այլն: Ծաղկաբույսերը նման են՝ հասկի, ողկույզի: Կան նաև ցածրահասակ, միաձաղիկ ցողուններով տեսակներ, որոնք աճում են ոչ մեծ խմբերով: Բնության մեջ զանգակ ծաղիկները հանդիպում են միայն Հյուսիսային կիսագնդում, բնօրրանը՝ Հարավային Եվրոպայի, Փոքր Ասիայի ու Կովկասի լեռներն են: Տարածված է Միջերկրականի ափերին, Եվրասիայում, Հյուսիսային Ամերիկայի արևմուտքում, աճում են բոլոր կլիմայական գոտիներում:

սրտի բարախման արձագանքն է: Տիբեթում զանգակը տաճարի բեմի կարևոր ատրիբուտներից է, այն հիշեցնում է, որ Բուդդան միշտ արթուն է և պետք է կատարել նրա իմաստուն պատգամները: Հավանաբար բոլոր հայերին է հայտնի, որ Գրիգոր ու Բուդդա բառերն ունեն հոմանիշ իմաստ՝ «արթուն»: Առաջին զանգերը պատրաստվել են Չինաստանում՝ Ք.ա. 20-րդ դարում: Ք.ա. 9-րդ դարում Ասորեստանում ձուլված զանգը ցուցադրված է Բրիտանական թանգարանում: Ըստ ավանդագրույցի, առաջին եկեղեցական զանգը ձուլվել է Իտալիայի Կամպանա մարզի Նոլա քաղաքում (Վ. Վետվիչկա, Растения полей и лесов) մոտավորապես 1600 տարի առաջ: Այն պատվիրել էր տեղի քրիստոնյա քահանան, ով Աստծո կամքով լսել էր մեղմ քամուց Աստանվող դաշտային զանգակ ծաղիկների «նվագած» մեղեդին: Զանգակն ընդգրկված է կելտական օրացույց գուշակարանում, որը հունիսի 1-11-ը ծնվածների ծաղիկն է, դրուիդները կարծում են, որ զանգակ-մարդը հաջողակ է բոլոր ոլորտներում: Ըստ հնագույն ավանդույթի՝ միակ օրը, երբ մարդուն շնորհված է լսել զանգակ-բույսի ձայնը, Հովհաննես Մկրտչի տոնն է:



տենի) տեսակները:

Զանգակ եռաբաժանը տարածված է Գեղամա լեռներում, աճում է հոծ խմբերով՝ հավերժական ծյան հարևանությամբ, ալպյան մարգագետիններում: Բազմամյա, մինչև 10 սմ բարձրությամբ բույս է: Վարդակի տերևների զազաթը եռաբաժան է: Սակավաթիվ ծաղկակիր ցողունները խոնարհվող են, մինչև 20 սմ բարձրությամբ, 1-ական մուգ մանուշակագույն ծաղիկով:

տուսին, տուփիկանման պտուղները հատուկանում են օգոստոսին: Սովորաբար հավաքում են հունիսին, երբ թարմ բույսի 100 գ կանաչ զանգակաձող պարունակում է ավելի քան 200 մգ ասկորբինաթթու և 369 մգ կարոտինային նյութեր, իսկ արմատում՝ փոփոխություններ և այլն:

Զանգակներից շատերն ունեն հակաբորբոքային, հակամանրէային, հանգստացնող, ցավազրկող, հակասկլերոտիկ, հիշողությունը լավացնող, հակատոքսիկ ազդեցություն: Որպես բուժահումք են ծառայում ցողունը, տերևը և ծաղիկը: Հավաքում են ծաղկման շրջանում: Չորացնում են ստվերում ու անմիջապես մանրացնում՝ 0.5-1 սմ չափով մասերի: Կարելի է չորացնել փոված կամ փնջերով՝ կախած դիրքով:

Հայերեն այլ անվանումներն են՝ բոժոժիկ, կաթնեղինճ, գեղձաբույս: Պատմական Հայաստանը զանգակ ծաղիկների բնօրրաններից է, ՀՀ տարածքում հանդիպում են դրանցից 21-ը, որոնցից բնաշխարհիկ են՝ Կարակուշին (Վայոց ձոր) ու Մասալուկ (Արագածոտն, Ար-

ԶԱՆԳԱԿԸ՝ ՈՐՊԵՏ ՀՈԳԵՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐՐ

Զանգակ ու ձայն բառերը վաղուց ի վեր դրոշմվել են բազմաթիվ ազգերի ենթագիտակցության մեջ՝ որպես հոմանիշներ: Մահմեդականները կարծում են, որ զանգակի ձայնն Աստծո

ՎԱՅՐԻ ՕԳՏԱԿԱՐ ԲՈՒՅՍԵՐԸ ՈՐՊԵՏ ՍՆՈՒՆԴ ԵՎ ԴԵՂԱՄԻՋՈՑ

Մեր հանրապետությունում բարդ երկրաբանական կառուցվածքը նպաստել է կլիմայի և ռելիեֆի խիստ բազմազանությանը: Դրանով էլ պայմանավորված է համեմատաբար փոքր տարածություն ունեցող Հայաստանի ֆլորիստական հարստությունը, նրա ինքնատիպությունը և բուսատեսակներով հագեցվածությունը: Հայաստանի տարածքում աճող 3500 բուսականությանից մոտ 2500-ն ունի բուժական նշանակություն, որից մեր հանրապետությունում կիրառվում է մոտ 250-ը, ոչ միայն որպես դեղամիջոց, այլև՝ որպես սնունդ: Բացի այդ, Հայաստանում աճող բուսատեսակներից ավելի քան 110-ը էնդեմիկներ են /աճում են միայն Հայաստանում/:

վայրի բույսերի չճանաչողության հետևանքով: Չնայած դեղամիջոցների անսահման առատությանը՝ աշխարհի առաջավոր երկրներում գնալով մեծ տեղ են հատկացնում բնական միջոցներին մի ամբողջ շարք հիվանդությունների բուժման համար: Պատճառն ակնհայտ է. որքան էլ կատարյալ լինի քիմիական /սինթետիկ/ դեղամիջոցը այն շատ անգամ կողմնակի, ոչ ցանկալի երևույթներ է առաջացնում, այն դեպքում երբ բնական միջոցները ազդող նյութի հետ մեկտեղ պարունակում են այնպիսի միացություններ, որոնք ուժեղացնում են առաջինի ազդեցությունը: Բնակչության մի մասը ոչ անհիմա, վախենում է քիմիական դեղամիջոցների օգտագործումից: Հաճախ դեղամիջոցները բավականին թանկ են, և բնակչության մեծամասնությունը պարզապես ի վիճակի չէ գնելու այն, մինչդեռ դեղաբույսերը բավականին էժան են և արդյունավետ, հաճախ կարող են ձեռք բերել անվճար:

Վայրի օգտակար բույսերը հայ ժողովրդի ավանդական սննդաբաժնի 10-15%-ն են կազմում: Յուրաքանչյուր տարի միայն Երևանի շուկաներում վաճառվում է շուրջ 180 տ վայրի դեղաբույսեր և բանջարեղեն, որոնք ուղղակի արմատահան են արվում և ոչնչացվում: Մեր հանրապետությունում նշված բուսատեսակներից 387-ը նշված են «Կարմիր գրքում», որոնք հիմնականում սննդի մեջ օգտագործվող բույսեր կամ դեղաբույսեր են: Դրանց մասին անհրաժեշտ տեղեկությունները՝ հավաքման, չորացման ու պահպանման ճիշտ տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ գիտելիքները հնարավորություն կտան խուսափելու թունավորման բազմաթիվ դեպքերից, կնպաստեն ոչնչացման վտանգի տակ գտնվող բույսերի պահպանմանը, ինչպես նաև բազմազան և առողջարար սննդի ապահովմանը:

Համաշխարհային մասշտաբով ներկայումս կիրառվող բոլոր տեսակի դեղամիջոցների 40%-ը ստացվում է բույսերից, ավելին, սրտանոթային հիվանդությունների բուժման բնագավառում գոյություն ունեցող դեղամիջոցների 90%-ը ունի բուսական ծագում: Երբեմն, առանց մասնագետի հետ խորհրդակցելու, շատերը փողոցից պատահական գնում են այն դեղաբույսերը, որոնք մեր հանրապետությունում տարածված չեն: Այսպես, օրինակ Հայաստանում ընդհանրապես դեղատնային երիցուկ չի աճում, կան միայն արտաքինով մի քիչ նման, սակայն այլ տեսակներ, որոնց բուժման հատկությունները կամ շատ թույլ, աննշան են արտահայտված /երիցուկ անհոտ/ կամ նույնիսկ թունավոր են /անթեմ գարշահոտ/: Նույնը կարելի է ասել նաև փողոցներում վաճառվող այլ դեղաբույսերի մասին:

Հաճախակի են թունավորման դեպքերը: Միայն վերջին մի քանի տարում գրանցվել է թունավորման բազմաթիվ դեպքեր, որոնցից մի քանիսը՝ վայրի բույսերի վերաձևակումից /ոչ ճիշտ պահածոյացումից/: Նման դեպքեր են գրանցվում նաև

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարգելի քաղաքացիներ, Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 52 48 34 հեռախոսահամարով:



Հ ա ն ր ա գ ի տ ա - րաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկի-նիստ» գրատներում:

ԸՆԴՈՒՆԱԿՎՈՒՄ Է 2016 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Table with 2 columns: «ԱԳՐՈՒՐԱՏՈՒ» թերթ and «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր. Includes subscription rates for 1 year and 6 months.

Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ատոտաշ» կազմակերպությունները

AGRONEWS logo and contact information for the publisher, including address, phone numbers, and website.